

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ  
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ  
ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԴՊՐՈՑՆԵՐՈՒ

# ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ

## ԴՊՐՈՑԻ

## ԴԱՍԵՐ

ԿՐՏՍԵՐ ԲԱԺԻՆ  
Գ. ԴԱՍԱՐԱՆ

ՊԱՏՐԱՍԵՑ  
ՆՈՒՊԱՐ ՍՐԿ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

ՄՈՆԹԷԱԼ

ԵՐԿՈՒ ԽՕՍԲ

Հողեկան անհուն զոհունակութեամբ կը վերահրատարակենք Կիրակնօրեայ դպրոցներու բազմալսողական մշակ  
Բարշ. Նուպար Սրկ. Պէրպէրեանի պատրաստած ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԴՊՐՈՑԻ ԴԱՍԵՐՈՒ Կրտսեր Բաժնի երեք  
դիրքերը՝ պատրաստուած արդի մանկավարժական ըմբռնողութեամբ եւ հայ մանուկին մարտչելի ու զիւրազա-  
ղորդ կերպով:

Անկասկած որ, այս երեք դասագրքերուն վերահրատարակութիւնը օրհնաբեր պիտի ըլլայ Կիրակնօրեայ  
Դպրոցներու աշակերտութեան համար, որովհետեւ տասնամեակէ մը ի վեր զգալի էր պահանջը նման հրատա-  
րակութեանց:

Այս առթիւ եղբայրական պարտք կը զգանք մեր շնորհակալութեան անկեղծ զգացումները յայտնել Ամե-  
րիկահայոց Արեւելեան Թեմի Առաջնորդ՝ Գերշ. Տ. Մեորոպ Ս. Արք. Աշնեանին, որուն բարեխօսութեամբ ազ-  
նիւ բարերարութեան՝ տիկին ՄԱՓԻԿ ՊԱՆՏԱՍԱՐԵԱՆ, սիրայօժար ստանձնեց սոյն գրքին հրատարակութեան ծախ-  
սերը:

Մեր պատուէրն ու թելադրանքն է Կիրակնօրեայի մեր դաստիարակ ուսուցիչներուն, որ յատուկ բժա-  
խնդրութեամբ ու նախանձախնդիր ոգիով զործածեն այս դասագրքերը հետեւելով վարը եղած մատնանշումնե-  
րուն:

20 Յունուար 1988  
Անթիլիաս

ՍԵՊՈՒՀ Ծ. ՎՐԴ. ՍԱՐԳԻՍԵԱՆ  
ՎԱՐԻՉ ՏՆՕՐԷՆ  
ՀԱՅՑ. ԵԿԵՂԵՑԻՈՅ ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԴՊՐՈՑՆԵՐՈՒ

ԴԱՍԱԳՐՔԻՍ ԳՈՐԾԱԾՈՒԹԵԱՆ ԵՂԱՆԱԿԸ

Այս դասագիրքը կը բաղկանայ երեսուն երեք դասերէ, Ձմեռնային Ուսման Տարեշրջանի ծրագրին  
համահայեց պատրաստուած:

- 1.— Մանկապարտիզպանուհին՝ իւրաքանչիւր աշակերտի դասագրքին կոկիկ կողմ մը պէտք է  
անցնէ, արպէտզի մաքուր պահուի: Այս կողմին վրայ պէտք է փակցնէ պիտակ մը, ամբար վրայ գրելով աշա-  
կերտին անունն ու մականունը եւ Ուսումնական Տարեշրջանի թուականը:
- 2.— Իւրաքանչիւր աշակերտ իր դասագիրքը պէտք է միասին տուն տանի, եւ ամէն Կիրակի միա-  
սին դպրոց բերէ գայն:
- 3.— Ուսուցիչը նախ քան դպրոց գալը, պարտի սերտել օրուայ դասը, խորագրին ներքեւ հշա-  
նակուած հատուածը կարդալով ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՁԷՆ:
- 4.— Դասաւանդութեան պահուն, իւրաքանչիւր աշակերտ իր ձեռքին մէջ պէտք է ունենայ իր  
դասագիրքը: Ուսուցչին օգնութեամբ պէտք է բանայ օրուայ դասին տեղը, եւ դիտէ նկարը ու հետեւի ու-  
սուցչին, որ նկարին վարի բաժինը գտնուող մի քանի տող դասը կարդալէ ետք, պէտք է հետաքրքրական  
կերպով պատմէ դասը եւ ապա աշակերտներուն պատմել տայ առանձին-առանձին:
- 5.— Ուսուցիչը պարտի գոց սարվեցնել ստորեւ գրուած ԳՈՑ ՍՈՐՎԻԼ բաժնի հատուածը:
- 6.— Դասաւանդութիւնը պէտք է տեւէ 10-15 վայրկեան եւ ո՛չ անլի: Ապա գունաւոր մատիտներ  
պէտք է տրամադրուին աշակերտներուն եւ ուսուցչաց օգնութեամբ նկարները ներդաշնակ կերպով ներկել  
տալու փորձեր կատարուին: Աշակերտներ այս աշխատանքը պէտք է շարունակեն տուն երթալէ ետք, իրենց  
ծնողաց եւ կամ իրենց տարեց քրոջ կամ եղբոր միջոցաւ՝ եթէ ունին: (\*)
- 7.— Իւրաքանչիւր աշակերտ յաջորդ Կիրակի իր դասագիրքը միասին պէտք է բերէ դպրոց, ա-  
ւարտած ըլլալով ներկելու լրացուցիչ իր աշխատանքը:
- 8.— Ուսուցիչը պէտք է հետաքրքրուի թէ աշակերտը իր պարտականութիւնը կատարած է: Ապա  
գնահատանքի եւ դիտողութեան խօսքերով, աշակերտին մօտ հետաքրքրութիւնը կրկնապատկէ՝ իր աշխա-  
տանքին նկատմամբ:
- 9.— Աշակերտներ եւ Ծնողներ պէտք է հոգածու ըլլան դասագրքին մաքուր պահպանման, ու տա-  
րեկերջին գայն ինանձով պահեն իրենց տան գրադարանին մէջ:

(\*) ԾԱՆՕԹ.— Եթէ մանկապարտիզպանուհին յարմար նկատէ դպրոցէն ներս շարունակել լրացուցիչ այս աշխատանքը,  
անէ արգելք չկայ, այդ պարագային դասագիրքը կարելի է պահել դպրոցէն ներս եւ տարեկերջին յանձնել աշակերտին:

# ՊԱՏԱՆԻ ՅԻՍՈՒՍ

(Ղուկ. Բ. 40—52)




Յիսուս Մանուկ Նագարէք քաղաքին մէջ զարգացաւ իմաստութեամբ ու հասակով, եւ Աստուծմէ ու մարդոցմէ շնորհք գտնելով: Ան միշտ հնազանդ էր իր ծնողքին: Պատանի Յիսուս կը սիրէր իր ընկերները եւ բարի օրինակ կ'ըլլար բոլորին իր վարք ու բարքով: Մարդիկ կը հիանային պատանի Յիսուսի բարութեան վրայ:

## ԳՈՑ ՍՈՐՎԻԼ

Յիսուս կը զարգանար իմաստութեամբ ու հասակով, եւ Աստուծմէ ու մարդոցմէ շնորհք գտնելով: Ղուկ. Բ. 52:

# ԱՍՏՈՒԹՄԷ ՇՆՈՐՀԱԿԱԼ ԸԼԼԱԼ

(Ա. Տիմ. Զ. 7—8)



Աստուածավախ մանուկներ եւ պատանիներ կերակուրէն առաջ կ'աղօթեն եւ Աստուծոյ շնորհակալութիւն կը յայտնեն:


Մեր սուրբ հայրապետները գրած են գեղեցիկ աղօթքներ, որոնց մէջ նշանաւոր է «Ճաշակեցուք խաղաղութեամբ» աղօթքը, զոր իւրաքանչիւր հայ պէտք է արտասանէ կերակուրի չսկսած:

## ԳՈՑ ՍՈՐՎԻԼ

Ճաշակեցուք խաղաղութեամբ գկերակուրս որ պատրաստեալ է մեզ ի Տեառնէ, եւ օրհնեալ է Տէր ի պարգեւս իւր: Ամէն:

# ՊԵՏՐՈՍԻ ԴԱԻԱՆՈՒԹԻՒՆԸ

(Մատթ. ԺԶ. 13—18)



Օր մը Յիսուս իր աշակերտներուն հարցուց.

— Մարդոց կարծիքը ի՞նչ է իմ մասին:

Աշակերտները ըսին.

— Ոմանք կ'ըսեն թէ Յովհաննէս Մ'կրտիչն ես, ուրիշներ՝ Եղիան, Երեմիան կամ մարգարէներէն մէկը:

— Իսկ դո՛ւք ինչ կ'ըսէք, հարցուց Յիսուս:

Սիմոն Պետրոս պատասխանեց եւ ըսաւ.

— Դուն Քրիստոսն ես կենդանի Աստուծոյ Որդին:

Յիսուս ըսաւ Պետրոսի.


— Երանի քեզի, Սիմոն, որովհետեւ մարմինն ու արիւնը չյայտնեցին քեզի այս բանը, այլ իմ Հայրս որ երկինքն է: Եւ ես կ'ըսեմ քեզի. Դուն վէ՛մ ես, ու այդ վէ՛մին վրայ պիտի շինեմ իմ եկեղեցիս:

## ԳՈՅ ՍՈՐՎԻԼ

Դուն Քրիստոսն ես, կենդանի Աստուծոյ Որդին: Մատթ. ԺԶ. 16:

## ՅԻՍՈՒՍԻ ԱՅԼԱԿԵՐՊՈՒԹԻՒՆԸ

(Մատթ. Ժ. 1—8)




Յիսուս իր աշակերտներէն Պետրոսը, Յովհաննէսն ու Յակոբոսը հետն առնելով լեռը ելաւ ազօթելու: Ազօթֆի պահուն յանկարծ Յիսուսի դէմքը արեւի նման փայլեցաւ եւ իր երկու կողմերը երեւցան Մովսէս եւ Եղիա մարգարէները, որոնք սկսան իր հետ խօսակցիլ: Աշակերտները այդ տեսարանին առջեւ ապշեցան: Քիչ ետք ամպ մը եկաւ ու հովանի եղաւ անոնց վրայ, ու ամպին մէջէն ձայն մը եկաւ որ կ'ըսէր, «Ատիկա է իմ սիրելի Որդիս, որուն հաւանք եմ, զԱյն մտիկ ըրէք»:

## ԳՈՑ ՍՈՐՎԻԼ

*Ատիկա է իմ սիրելի Որդիս, որուն հաւանք եմ, զԱյն մտիկ ըրէք: Մատթ. Ժ. 5:*

# ՅԻՍՈՒՍ ԾՈՎՈՒՆ ՎՐԱՅԷՆ ԿՐ ՔԱԼԷ

(Մատթ. ԺԴ. 22—33)



Իրիկուն մը Յիսուս իր աշակերտները նաւով նամբեց եւ ինք սկսաւ ազօթել: Ուշ գիշերին Յիսուս իր ազօթքը վերջացնելէ ետք, սկսաւ ծովուն վրայէն փախելով իր աշակերտներուն հով հասնիլ: Աշակերտները գիշերուան մութին մէջ չկրցան նանչնալ Յիսուսը եւ սարսափեցան: Յիսուս անոնց այդ վիճակը տեսնելով ձայն տուաւ եւ ըսաւ.


— Քաջ եղէք, ես եմ, մի՛ վախճաք:

## ԳՈՑ ՍՈՐՎԻԼ

Քաջ եղէք, ես եմ, մի՛ վախճաք: Մատթ. ԺԴ. 28:

# Ի ԺՆԷ ԿՈՅՐԻՆ ԲԺՇԿՈՒԹԻՒՆԸ

(Յովհ. Թ. 1—7)



Յիսուս եւ իր աշակերտները Երուսաղէմի մէջ տեսան մարդ մը, որ ի ծնէ կոյր էր: Յիսուս գետին թփաւ եւ թուփովը կաւ շինեց, ու անով կոյրին աչքերը ծեփեց եւ ըսաւ.

— Գնա յուացուէ Սելովամի աւազանին մէջ: Երբ կոյրը Սելովամի աւազանին մէջ իր աչքերը յուաց, անմիջապէս սկսաւ տեսնել ու Աստուծոյ փառք տալ:

## ԳՈՑ ՍՈՐՎԻԼ

Գնա, յուացուէ Սելովամի աւազանին մէջ: Յովհ. Թ. 7:



# ԲԱՐԻ ՀՈՎԻԻՉ

(Սաղմ. ԻԲ. (ԻԳ.) 1—10)




Յիսուս մեր բարի հովիւն է եւ մենք անոր հօտին ոչխարներն ենք: Ան իր ոչխարները խոտաւէտ արօտներու մէջ կը պառկեցնէ եւ հանգարտ ջուրերուն խով կ'առաջնորդէ: Յիսուս կը պահէ ու կը պահպանէ զանոնք Սատանայի որոգայթներէն: Յիսուս շատ սիրեց իր ոչխարները եւ անոնց փրկութեան համար իր անձը զոհեց խաչին վրայ:

## ԳՈՑ ՍՈՐՎԻԼ

Անիկա հովուի պէս իր հօտը պիտի հովուէ. Գառնուկները իր բազուկովը պիտի ժողվէ, ու զանոնք իր գիրկին մէջ պիտի կրէ: Եսայ. Խ. 11:

## ԲԱՐԻ ՍԱՄԱՐԱՅԻՆ

(Ղուկ. Ժ. 30—35)





Մարդ մը երուսաղէմէ երիւոյ կը քալու առն, աւագակներու կողմէ կողոպտուեցաւ ու վիրաւորուեցաւ: Քիչ ետք այնտեղէն անցան քահանայ մը եւ դելտացի մը, սակայն անոնք վիրաւոր մարդուն ուշադրութիւն չդարձուցին: Անոնցմէ վերջ հասաւ Սամարացի մարդ մը, որ վիրաւորը տեսնելով խղճաց եւ անոր վերքերը կապելէ ետք, գայն իր գրաստին վրայ նստեցնելով պանդոկ մը տարաւ ու պանդոկապետին դրամ տալով պատուիրեց որ հոգ տանի վիրաւորին որպէսզի շուտով առողջանայ:

## ԳՈՑ ՍՈՐՎԻԼ

Եւ մտեցաւ, անոր վերքերը փաթթեց, վրան ձէթ եւ գինի թափելով: Ղուկ. Ժ. 34:

# ԱՆԱՌԱԿ ՈՐԴԻՒՆ ԴԱՐՁԸ

(Ղուկ. ԺԵ. 11—32)



Մարդ մը երկու որդի ունէր: Օր մը կրտսեր որդին իր ժառանգութիւնը առնելով հեռացաւ իր հօրենական տունէն եւ օտար երկիր մը գնաց: Հոն ապրեցաւ անառակ կեանք մը եւ վատնեց իր դրամը: Նոյն միջոցին սով տիրեց այդ երկրին մէջ եւ անառակ տղան ստիպուեցաւ խոզեր արածել, կտոր մը հաց նարելու համար. սակայն շատ քիչ ուտելիք կ'անցնէր իր ձեռքը: Անառակ տղան գոչաց իր ըրածներուն վրայ եւ օր մըն ալ վերադարձաւ իր հօրը բով ու ներողութիւն խնդրեց: Հայրը գրկեց իր որդին, համբուրեց եւ ներեց անոր: Ապա ըսաւ իր ժառանգելուն.

— Հանեցէ՛ք նախկին պատմունանք ու հազցուցէ՛ք անոր, եւ մատանի դրէ՛ք անոր ձեռքը ու կօշիկներ՝ անոր ոտքերը: Մտքեցէ՛ք պարարտ գուարակը, ուտե՛նք եւ ուրախ ըլլանք. որովհետեւ այս իմ որդիս մեռած էր՝ ողջնցաւ, կորսուած էր՝ գտնուեցաւ:

## ԳՈՑ ՍՈՐՎԻԼ

Որովհետեւ այս իմ որդիս մեռած էր՝ ողջնցաւ, կորսուած էր՝ գտնուեցաւ: Ղուկ. ԺԵ. 24:

# ՏԱՍԸ ԲՈՐՈՏՆԵՐԸ

(Ղուկ. ԺԷ. 11—19)



Յիսուս գիւղ մը մտնելու ատեն տասը բարստներ հանգիպեցան իրեն արմեհ կ'ազա-  
պակէին ու կ'ըսէին.

— Բարի վարդապետ, ոգորմէ մեզի:

Յիսուս զանոնք բժշկելով նամբեց: Անոնց մէջէն միայն Սամարացի մը իր բով  
եկաւ եւ մինչեւ գետին խոնարհելով շնորհակալութիւն յայտնեց: Իսկ միւսները գացին ու  
չվերադարձան: Յիսուս Սամարացիին երախտագիտութիւնը զովելէ ետք. ըսաւ.


— Ելի՛ր, գնա՛, բո՛ւ հաւատո՛ղ քեզ բժշկեց:

## ԳՈՑ ՍՈՐՎԻԼ

Ելի՛ր, գնա՛, բո՛ւ հաւատո՛ղ քեզ բժշկեց: Ղուկ. ԺԷ. 19:

# ՅԻՍՈՒՍ ԿՕՐՅՆԷ ՄԱՆՈՒԿՆԵՐԸ

(Մարկ. Ժ. 13—16)



Օր մը խումբ մը մայրեր իրենց մանուկները Յիսուսի բերին, որպէսզի զանոնք օրհնէ: Բայց աշակերտները յանդիմանեցին բերողները: Յիսուս երբ տեսաւ, ըսաւ իր աշակերտներուն:

— Թոյլ տուէ՛ք այդ փոքրիկ տղոց որ ինծի գան, եւ մի արգիլէ՛ք զանոնք, վասնզի Աստուծոյ թագաւորութիւնը այդպիսիներուն է: Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, ով որ Աստուծոյ թագաւորութիւնը մանուկի մը պէս չընդունի, բնաւ պիտի չկարենայ մտնել Անկէ ներս:


Ապա Յիսուս այդ չարուլիկ մանուկները գիրկը առաւ, եւ օրհնեց զանոնք:

## ԳՈՑ ՍՈՐՎԻԼ

Ով որ Աստուծոյ թագաւորութիւնը մանուկի մը պէս չընդունի, բնաւ պիտի չկարենայ մտնել Անկէ ներս: Մարկ. Ժ. 15:

# ՀԱՐՈՒՍ ԻՇԽԱՆԸ

(Ղուկ. ԺԸ. 18—25)



Երիտասարդ եւ հարուստ իշխան մը Յիսուսի եով գալով հարցուց.

— Բարի վարդապետ, ի՞նչ պէտք եմ ընել որ յաւիտեանական կեանքը ժառանգեմ:

— Պատուիրանները գիտես. մի՛ շնար, մի սպաններ, մի՛ գողնար, սուտ մի՛ վկայեր, հայրդ ու մայրդ պատուէ:

— Այդ ամէնը մանկութենէս ի վեր պահած եմ, ըսաւ իշխանը:

Յիսուս ըսաւ անոր.

— Բան մըն ալ պակաս է քեզի. ինչ որ ունիս ծախէ, ազատներուն տուր եւերկրնքի մէջ գանձեր պիտի ունենաս, ու եկուր խմ ետեւէս:



Իշխանը երբ այս խօսքերը լսեց՝ տրտմեցաւ, որովհետեւ շատ հարուստ էր:

## ԳՈՑ ՍՈՐՎԻԼ

Ձեր գանձը ուր որ է, ձեր սիրտն ալ հոն պիտի ըլլայ: Մատթ. Զ. 21:

# ԶԱԿՔԷՈՍԻՆ ԴԱՐՉԸ

(Ղուկ. ԺԹ. 1—10)



Յիսուս Երիֆովի մէջէն անցնելու ատեն Զակէոս անունով մաքսապետ մը ուզեց տեսնել զԱյն. սակայն բազմութիւն ըլլալուն համար չէր կրնար, որովհետեւ կարճահասակ էր: Ուստի ծառի մը վրայ ելաւ: Յիսուս այնտեղ հասնելով, վեր նայեցաւ եւ ըսաւ.

— Զակէոս, անապարէ, վար իջի՛ր, վասնզի ես այսօր քու տունդ պիտի գամ:

Զակէոս ուրախութեամբ ծառէն վար իջաւ եւ Յիսուսը իր տունը ընդունեց եւ հիւրասիրեց: Ապա Յիսուսի առջեւ կայնելով խոստովանեցաւ իր մեղքերը, եւ խոստացաւ մաքուր կեանք մը ապրիլ: Յիսուս ըսաւ անոր.



— Այսօր այս տանը փրկութիւն եղաւ:

## ԳՈՑ ՍՈՐՎԻԼ

Այսօր այս տանը փրկութիւն եղաւ: Ղուկ. ԺԹ. 9:

# ԵՐԿՈՒ ՔՈՅՐԵՐ

(Ղուկ. Ժ. 38—42)



Մարիամ եւ Մարթա երկու քոյրեր էին: Յիսուս բարեկամ էր անոնց եղբոր՝ Լազարոսի եւ յանախ կ'այցելէր զանոնք: Օր մը երբ Յիսուս դարձեալ այցելութիւն մը տուաւ անոնց, Մարթա սկսաւ չափազանց զբաղուիլ նաշի պատրաստութեամբ: Իսկ Մարիամ Յիսուսի բով նստելով մեծ յափշտակութեամբ սկսաւ մտիկ ընել Անոր երկնային սքանչելի խօսքերը:

Մարթա նաշի պատրաստութեան մէջ առանձինն մնալով, մօտեցաւ Յիսուսի եւ ըսաւ.

— Տէ՛ր, ըսէ՛ քոյս որ օգնէ ինձի:

Յիսուս պատասխանեց անոր եւ ըսաւ.




— Մարթա՛, Մարթա՛, դուն շատ կը տազնապիս նաշի պատրաստութեամբ, մինչ այստեղ անկէ աւելի կարեւոր հարցերով կ'ըզբաղուի քոյրդ: Մարիամ այսօրուայ հիւրասիրութեան մէջ լաւագոյն բաժինը ընտրեց, որ իբրմէ պիտի չառնուի երբեք:

## ԳՈՑ ԱՌՐՎԻ



# ՂԱԶԱՐՈՍԻՆ ՅԱՐՈՒԹԻՒՆԸ

(Յովհ. ԺԱ. 1—44)



Օր մը Յիսուսի բարեկամը՝ Ղազարոս ծանրապէս հիւանդացաւ: Մարիամ եւ Մարթա Յիսուսի էով մարդ դրկեցին որպէսզի գայ եւ բժշկէ իրենց եղբայրը: Երբ Յիսուս Բեթանիա հասաւ, Ղազարոս արդէն չորս օրուան մեռած ու թաղուած էր: Մարթա երբ Յիսուսը տեսաւ, ըսաւ Անոր.

— Տէր, եթէ հոս՝ ըլլայիր, եղբայրս չէր մեռներ:

Յիսուս ըսաւ Մարթայի.

— Ես եմ յարութիւնը ու կեանքը. ան որ ինձի կը հաւատայ, թէեւ մեռնի՝ պիտի ապրի:

Յիսուս Ղազարոսին գերեզմանը երթալով նախ աղօթեց եւ ապա բարձր ձայնով կանչեց.

— Ղազարո՛ս, դուրս ելիր:

Իսկոյն Ղազարոս յարութիւն առաւ եւ գերեզմանէն դուրս ելաւ:

## ԳՈՅ ՍՈՐՎԻԼ

Ես եմ յարութիւնը ու կեանքը. ան որ ինձի կը հաւատայ, թէեւ մեռնի՝ պիտի ապրի: Յովհ. ԺԱ. 25:

ՅԻՍՈՒՍ ԵՐՈՒՍԱԴԵՄ ԿԸ ՄՏՆԷ

(Մարկ. ԺԱ. 1—10)





Յիսուս որոշեց Երուսաղէմ երթալ: Իր աշակերտները իշուկ մը բերին եւ անոր վրայ իրենց հանդերձները փռեցին: Յիսուս նստաւ իշուկին վրայ ու սկսաւ յառաջանալ: Աշակերտները սկսան օրհնութեան երգեր երգել: Ուրիշ ուխտաւորներ ալ միացան իրենց: Երուսաղէմի մէջ մեծեր ու պզտիկներ Յիսուսի գալուստը իմանալով, արմաւենիի եւ ձիթենիի ճիւղերով դիմաւորեցին զԱյն ու ազազակեցին, «Ովսաննա. օրհնեալ է ան որ Տիրոջ անունովը կուգայ»:

ԳՈՑ ՍՈՐՎԻԼ

Ովսաննա. օրհնեալ է ան որ Տիրոջ անունովը կուգայ: Մարկ. ԺԱ. 9:

# ԱՅՐԻ ԿՆՈՋ ԼՈՒՄԱՆ

(Մարկ. ԺԲ. 41—44)



Յիսուս տանարին մէջ. գանձանակին դիմաց նստած՝ կը դիտէր դրամ ձգողները: Շատ հարուստներ մեծ գումարներ ձգեցին: Քիչ ետք ազատ որբեայրի մը գալով երկու լումայ ձգեց գանձանակին մէջ: Յիսուս իր աշակերտները կանչելով ըսաւ.

— Այս ազատ որբեայրին գանձանակը դրամ ձգողներուն մէջ ամենէն աւելի ձգեց. քանի որ միւսները իրենց ունեցածին աւելցածէն ձգեցին, սակայն ասիկա իր բոլոր ունեցածը ձգեց:




## ԳՈՅ ՍՈՐՎԻԼ

*Ճշմարիտ կ'ըսեն՝ ձեզի որ այս ազատ որբեայրին ամենէն աւելի ձգեց գանձանակին մէջ:*

*Ղուկ. ԻԱ. 3:*

# ՅԻՍՈՒՍ ԻՐ ԱՇԱԿԵՐՏՆԵՐՈՒՆ ՈՏՔԵՐԸ ԿԸ ԼՈՒԱՅ

(Յովհ. ԺԳ. 2 — 15)



Վերջին ընթրիքի ատեն, Յիսուս իր աշակերտներուն խոնարհութեան դաս մը տալու համար անոնց ոտքերը լուաց եւ ապա ըսաւ .



— Գիտե՞ք թէ ինչ ըրի այսօր : Դուք գիտ Վարդապետ եւ Տէր կը կոչէք, եւ լաւ կ'ընէք . վասնզի իրապէս Վարդապետ եմ : Արդ, եթէ ես Տէրս ու Վարդապետս ձեր ոտքերը լուացի, դուք ալ պարտաւոր էք իրարու ոտքերը լուալ : Որովհետեւ օրինակելի դաս մը տուի ձեզի այսօր, որպէսզի ինչպէս որ ես ձեզ պատուեցի, դուք ալ այդպէս պատուել գիտնա՞ք զիրար :

## ԳՈՑ ՍՈՐՎԻԼ

Արդ, եթէ ես Տէրս ու Վարդապետս ձեր ոտքերը լուացի, դուք ալ պարտական էք իրարու ոտքերը լուալ : Յովհն. ԺԳ. 14 :

# ՍՈՒՐԲ ՀԱՂՈՐԴՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ

(Ղուկ. ԻԲ. 19—20)



Վերջին ընթրիքի միջոցին Յիսուս հաց առաւ, գոհացաւ եւ իր աշակերտներուն տալով ըսաւ.

— Առէ՛ք, կերէ՛ք, այս է իմ մարմինս որ ձեզի համար տրուած է. ասիկա ըրէ՛ք զիս յիշելու համար:

Աշակերտները Յիսուսի օրհնած հացէն նաշակեցին: Յիսուս գինիի բաժակն ալ առաւ, գոհացաւ ու աշակերտներուն տալով ըսաւ.

Ամէնք ալ խմեցէ՛ք ասկէ, որովհետեւ ասիկա է իմ արիւնս նոր Ռւխտի, որ ձեզի եւ շատերու համար կը թափուի մեղքերու թողութեան համար:




Աշակերտները խմեցին նոյն բաժակէն:

## ԳՈՑ ՍՈՐՎԻԼ

Ով որ իմ մարմինս եւ արիւնս ուտէ եւ խմէ, յաւիտեան կեանք կ'ունենայ: Յովհ. 2. 55:

# ՅԻՍՈՒՍ Կ'ԱՂՈԹԷ

(Ղուկ. ԻԲ. 39—46)



Վերջին ընթրիքէն ետք. Յիսուս իր աշակերտներով գնաց Գեթսեմանիի պարտեզը եւ անոնց ըսաւ .

— Հոս նստեցէ՛ք, ես երթամ պահ մը ազօթեմ: Դուք ալ ազօթեցէ՛ք որ փորձութեան մէջ չիյնա՛ք:




Յիսուս քիչ մը անդին երթալով սկսաւ ջերմեռանդութեամբ ազօթել, քանի որ նեղութեան ու տագնապի մէջ էր: Քիչ ետք հրեշտակ մը երեւցաւ իրեն եւ զինք քաջալերեց ու զօրացուց:

## ԳՈՑ ՍՈՐՎԻԼ

Ազօթք ըրէք, որպէսզի փորձութեան մէջ չիյնաք: Ղուկ. ԻԲ. 40:

# ՅԻՍՈՒՍԻ ՁԵՐԲԱԿԱԼՈՒԹԻՒՆԸ

(Ղուկ. ԻԲ. 47—53)



Գեթսեմանիի պարտեզին մէջ Յիսուս իր ազօթքը վերջացնելէ ետք իր աաշկերտներուն հոգ եկաւ: Նոյն միջոցին Յուդա իսկաբիովտացին ամբոխի մը գլուխն անցած մօտեցաւ Յիսուսին ու զԱյն համբուրեց: Յիսուս ըսաւ Յուդայի.

— Յուդա, համբուրելով կը մատնես Որդին Մարդոյ:




Պետրոս առաքեալ Յիսուսը պաշտպանելու համար իր սուրբ քաշեց եւ քահանայապետի ծառային ահանջը կտրեց: Յիսուս պատուիրեց Պետրոսին որ իր սուրբ պատեանին մէջ դնէ: Ապա ծառային կտրուած ահանջը բժշկեց եւ թոյլ տուաւ որ զինք ձերբակալեն:

## ԳՈՑ ՍՈՐՎԻԼ

Եւ գլխաւ անոր ահանջին ու բժշկեց զանիկաւ: Ղուկ. ԻԲ. 51:

# ՊԵՏՐՈՍԻ ՈՒՐԱՑՈՒՄԸ

(Մարկ. ԺԴ. 30—72)



Վերջին ընթրիքէն ետք Յիսուս Պետրոսի ըսած էր, «Այս գիշեր, դեռ հաւը երկու անգամ չխօսած, դուն զիս երեք անգամ պիտի ուրանաս»:

Հրեաներ քահանայապետի ապարանքին մէջ երբ Յիսուսը կը դատէին, Պետրոս դուրսը՝ գաւթիին մէջ կեցած էր: Հոն գտնուողներէն մի քանիներ Պետրոսը տեսնելով ըսին.

— Ասիկա Յիսուսի հետեւորդներէն է:

Պետրոս անոնցմէ վախճալով երեք անգամ ուրացաւ Յիսուսը եւ ըսաւ թէ ինձ Անոր աշակերտներէն չէ: Մինչ Պետրոս իր Տէրը կ'ուրանար հաւը երկու անգամ խօսեցաւ: Պետրոս Յիսուսի խօսքը միտքը բերելով անդրադարձաւ իր սխալին ու մեղքին, եւ դուրս ելլելով դառնապէս լացաւ:




## ԳՈՑ ՍՈՐՎԻԼ

Ո. Պետրոս դուրս ելլելով դառնապէս լացաւ: Ղուկ. ԻԲ. 62:



ՅԻՍՈՒՍ ՊԻՂԱՏՈՍԻ ԱՌՋԵԻ

(Յովհ. ԺԸ. 28—40, ԺԹ. 1—16)






Հրեաներ Յիսուսը ձերբակալելով տարին՝ Հրէաստանի կուսակալ Պիղատոսին առջեւ: Կուսակալը Յիսուսը հարցաքննելով ռեւէ յանցանք չգտաւ Անոր վրայ, եւ ուզեց զԱյն ազատ արձակել: Բայց հրեաներ սկսան գոչել. «Խաչել տուր զանիկա»: Պիղատոս հրեաներու քմահաճոյքին գոհացում տալու համար Յիսուսը յանձնեց իր զինուորներուն, որոնք կարմիր պատմունան մը հագցուցին Անոր. գլխուն դրին փուշէ պսակ եւ ձեռքն ալ եղէգ մը տալով սկսան ծաղրել ու ծեծել:

ԳՈՅ ՍՈՐՎԻԼ

Կարմիր վերարկու մը հագցուցին Անոր, եւ փուշերէ պսակ մը հիւսելով դրին Անոր գլուխը:  
Մատթ. ԻԷ. 28—29:

# ՅԻՍՈՒՍԻ ԽԱԶԵԼՈՒԹԻՒՆԸ

(Յովհ. ԺԹ. 17—27)






Հրեաներ Յիսուսը խաչեցին Գողգոթայի բլուրին վրայ: Յիսուս խաչի չարչարանքն ու մահը յանձն առաւ, որպէսզի իր սուրբ արիւնը թափելով թողութիւն շնորհէ մարդոց մեղքերուն: Մարիամ Աստուածածին ողբաց իր Որդւոյն մահը: Յովհաննէս առաքեալ եւ մի քանի բարեպաշտ կիներ ցաւակից եղան Սուրբ Կոյս Մարիամին ու ջանացին մխիթարել զայն:

## ԳՈՑ ՍՈՐՎԻԼ

Անիկա մեր մեղքերուն համար վերաւորուեցաւ: Եսայ. ԾԳ. 5:

# ՅԻՍՈՒՍԻ ՅԱՐՈՒԹԻՒՆԸ

(Մատթ . ԻԸ . 1—8)



Կիրակի առաւօտ շատ կանուխ, խոււր մը բարեպաշտ կիներ, իրենց հետ խունկ եւ անուշահոտ իւզեր առնելով Յիսուսի գերեզմանը գացին: Սակայն գերեզմանը պարապ գտնելով զարմացան: Մինչ շուարած կը նայէին, յանկարծ հրեշտակ մը երեւցաւ իրենց եւ ըսաւ .

— Մի՛ վախնա՛ք, գիտե՛մ որ խաչուած Յիսուսը կը փնտռէ՛ք: Անկէա հոս չէ, այլ յարութիւն առաւ:


Կիները՝ վախով բայց եւ ուրախութեամբ մեկնեցան գերեզմանէն. Յիսուսի յարութիւնը աւետելու համար աշակերտներուն:

## ԳՈՑ ՍՈՐՎԻԼ

Անկէա հոս չէ, որովհետեւ յարութիւն առաւ: Մատթ . ԻԸ . 6:

ՅԻՍՈՒՍԻ ԵՐԵՒՈՒՄԸ ԻՐ ԱՇԱԿԵՐՏՆԵՐՈՒՆ

Յովհ. Ի. 19—29)



Կիրակի իրիկուն երբ աշակերտները սենեակի մը մէջ էին, յանկարծ Յիսուս իրենց մէջտեղ կայնեցաւ եւ ըսաւ, «Խաղաղութիւն ձեզի»։ Աշակերտները հաւատացին Յիսուսի յարութեան եւ ուրախացան։ Այդ միջոցին Թովմաս առաքեալ բացակայ ըլլալով չտեսաւ Յիսուսը, եւ երբ իրեն պատմեցին չկրցաւ հաւատալ։ Ուր որ ետք երբ Թովմաս միւս աշակերտներուն հետ էր, Յիսուս նորէն երևցաւ եւ Թովմասը կանչելով ըսաւ.

Յկուր եւ տես, ու ձեռքովդ շոշափէ վերքերս, ու մի ըլլար անհաւատ։  
Թովմաս ըսաւ Յիսուսի.

— Դուն զիս տեսար եւ անոր համար հաւատացիր. երանի անոնց որ առանց տեսնելու կը հաւատան։

ԳՈՑ ՍՈՐՎԻԼ

Երանի անոնց որ առանց տեսնելու կը հաւատան։ Յովհ. Ի. 29։

# ԳԱԼԻԼՈՅ ԼԵՐԱՆ ԵՐԵՒՈՒՄԸ

(Մատթ. ԻԸ. 16—20)



Յիսուս իր յարութենէն ետք Գալիլիոյ լերան վրայ դարձեալ երեւցաւ իր աշակերտներուն եւ ըսաւ .




— Ինչպէս Հայրը, զիս զրկեց՝ ես ալ ձեզ կը զրկեմ: Գացէ՛ք եւ Քրիստոնէութեան երաւիրեցէ՛ք բոլոր ազգերը. մկրտեցէ՛ք զանոնք յանուն Հոր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ: Սորվեցուցէ՛ք անոնց պահել ինչ որ ես ձեզի պատուիրեցի. եւ ահաւասիկ ես ձեզի հետ եմ. մինչեւ աշխարհի վախճանը:

## ԳՈՑ ՍՈՐՎԻԼ

Գացէ՛ք եւ Քրիստոնէութեան հրաւիրեցէ՛ք բոլոր ազգերը. մկրտեցէ՛ք զանոնք յանուն Հոր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ: Մատթ. ԻԸ. 19:

# ՅԻՍՈՒՄԻ ՀԱՄԲԱՐՉՈՒՄԸ

(Գործք. Ա. 1—12)



Իր յարութենէն ետք, Յիսուս փառասուն օրերու ընթացքին երեցաւ իր աշակերտներուն: Անոնց հետ խօսեցաւ, մաշեց եւ պատուէրներ տուաւ: Քառասուներորդ օրը Յիսուս դարձեալ երեցաւ իր աշակերտներուն եւ զանոնք երուսադէմէ դուրս՝ Չիքենեաց լեռը տանելով օրհնեց, եւ մինչ կ'օրհնէր սկսաւ դէպի երկինք համբարձաւ: Աշակերտները ապշած կը դիտէին Յիսուսը, եւ այդ պահուն ամպ մը գալով իրենց աչքէն ծածկեց զԱնիկա:




## ԳՈՑ ՍՈՐՎԻԼ

*Մինչ անոնք կը նայէին, համբարձաւ. եւ ամպ մը զԱնիկա անոնց աչքէն ծածկեց:*

*Գործք. Ա. 9:*

# ԿԵՆԱՑ ՅԱՅՈՂ

(Յովհ. Զ. 33—60)



Օր մը Յիսուս ըսաւ բազմութեան.

— Ես եմ կենաց հացը. ան որ ինձի կուգայ, երբեք պիտի չամօթեմայ, եւ ան որ ինձի կը հաւատայ, պիտի չծարաւի...: Ես եմ կենդանի հացը որ երկինքէն իջայ: Եթէ մէկը այս հացէն ուտէ, յաւիտեան պիտի ապրի. եւ այն հացը գոր ես պիտի տամ իմ մարմինս է...: Ով որ իմ մարմինս եւ արիւնս ուտէ եւ ըմպէ, յաւիտեանական կեանք պիտի ունենայ»:

Յիսուս իր այս խօսքերովը կը պատուիրէր, որ բոլոր քրիստոնեայ մարդիկ Սուրբ Հաղորդութիւն առնեն, որովհետեւ Սուրբ Հաղորդութիւնը իր մարմինն ու արիւնն է:



## ԳՈՑ ՍՈՐՎԻԼ

Ես եմ կենդանի հացը որ երկինքէն իջայ: Յովհ. Զ. 51:

Լ. Դ Ա Ս

# ՅԻՍՈՒՍ ԴՈՒՌԸ ԿԸ ԲԱԽԷ

(Բ. Կորն. 2. 16—18)



Յիսուս միշտ կը բախէ մարդոց սրտերուն դռները եւ կ'ուզէ ներս մտնել, մաքրել զանոնք իրենց մեղքերէն եւ հոն բնակիլ: Ով որ իր սրտին դուռը կը բանայ Յիսուսի առջեւ, Ան բնակութիւն կը հաստատէ հոն, զայն վերածելով Աստուծոյ Տաճարի:




ԳՈՑ ՍՈՐՎԻԼ

*Վասնզի դուք կենդանի Աստուծոյ տաճարն էք: Բ. Կորն. 2. 16:*



ՅԻՍՈՒՍ ԿՐՆԳՈՒՆԻ ԲՈԼՈՐ ՄԵՂԱԽՈՐՆԵՐԸ

(Ղուկ. ԺԹ. 10)



Յիսուս կ'ուզէ որ բոլոր մեղաւորները իրեն գան, խոստովանին իրենց մեղքերը եւ թողութիւն ստանան: Չկայ մէկը որ մեղք գործած չըլլայ: Ուստի բոլոր մարդիկ գղջալու են իրենց գործած մեղքերուն համար, եւ զանոնք խոստովանին Աստուծոյ ու Եկեղեցւոյ պաշտօնեաներուն առջեւ եւ թողութիւն խնդրեն:

Յիսուս կ'ընդունի գղջացող մեղաւորները եւ կը ներէ անոնց մեղքերը:




ԳՈՅ ՍՈՐՎԻԼ

Ինծի եկէջ ով բոլոր յոգնած ու բեռնաւորուածներ, եւ ես ձեզ պիտի հանգչեցնեմ:

Մատթ. ԺԱ. 28:

ՏԵՐՆ ՄԵՐ ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ

(Յովհ. Գ. 13—16)




Մեր Տերը Յիսուս Քրիստոս՝ Աստուծոյ Միածին Որդին երկինքէն իջաւ եւ ծնաւ Սուրբ Կոյս Մարիամէն: Երեսուն տարեկանին մկրտուեցաւ Յորդանան գետին մէջ՝ Յովհաննէս Մկրտիչի կողմէ: Քարոզեց եւ հրաշքներ գործեց: Չարչարուեցաւ, խաչուեցաւ, թաղուեցաւ եւ երրորդ օրը յարութիւն առաւ: Երեսցաւ իր աշակերտներուն եւ երկինք համբառնալով նստաւ Հայր Աստուծոյ աջ կողմը: Ան դարձեալ պիտի գայ իր Հօրը փառօվը եւ պիտի դատէ աշխարհը: Արդարեւնքուն պիտի շնորհէ յաւիտեանական երջանիկ կեանք. իսկ մեզաւորներուն՝ յաւիտեանական տանջանք:

ԳՈՑ ՍՈՐՎԻԼ

Չարչարեալ, խաչեալ, թաղեալ, յերրորդ աւուր յարուցեալ: «Հաւատամք»

# ՔՐԻՍՏՈՆԵԱՅ ԸՆՏԱՆԻՔ

(Սաղմ. ձեռ. (ձեռլ.) 1—2)



Աստուած կ'ուզէ որ բոլոր մարդիկ ընտանեօք ըլլան սուրբ եւ անարատ, ու պահեն իր օրէնքները: Աստուծոյ օրհնութիւնը անպակաս է այն ընտանիքներուն վրայ, որոնք զինք կը պաշտեն եւ կ'ապրին Սուրբ Գրքի պատուիրաններուն համաձայն:

Հայ ընտանիքներ պէտք է ապրին սրբութեամբ ու պահեն իրենց եկեղեցական օրէնքներն ու ազգային բարի սովորութիւնները:

## ԳՈՑ ՍՈՐՎԻԼ

*Անոնք որ զինք ընդունեցին, անոնց իշխանութիւն տուաւ: Աստուծոյ որդիներ ըլլալու:*